



## Արամ Մանուկեան Ճամբար, Շուշի, Արցախ

1615, Rue Islemère, Laval, Québec, Canada, H7Y 2A4 / 6 Մուրացան Փ., Շուշի, Արցախ  
Է-հասցե՝ haytouganda@hotmail.com ; Է-կայք՝ www.shoushisummercamp.org

Լաւալ, 09 Օգոստոս 2013

Նարեկացի Արուեստի Միութիւն / Շուշի

Միւրեքներ,

Իրօք զգացուած ենք ստանալով Արցախի Շուշիի Վարչակազմի 05 Օգոստոս 2013 թուակիր Պատուոգիրը, եւ խնդրում ենք որ փոխանցէք մեր շնորհակալութիւնը սոյն իշխանութեանց, յանձինս յարգելի Պարոններ Վ.Ս. Կասեանին ու Մ. Խաչատրեանին:

Սակայն դուք լաւ գիտէք թէ մեզի համար ամենաեական ու անգին Շքանշանը Շուշիի երեխաներու ծիծաղին, զուարճանքին, գոհունակութեան եւ ուրախութեան մէջ կը կայանայ, Շուշիի ժողովուրդի հարազատ սիրով ու գնահատանքով կը շնորհուի, եւ այդ էական իմաստով՝ մենք տարիներէ ի վեր ամբողջապէս ողողուած ենք արդէն այդ անհուն պարծանքով ու պատիւով, Փառք Աստուծոյ: Ամէն ջանք շարունակելու ենք թափել, որպէսզի արժանի լինենք/մնանք այդ աստիճան սիրոյ, ընդունելութեան եւ գուրգուրանքի:

Հարկաւոր է նշել թէ կարելի չէր ըլլար հիմնարկի վերածուած մեր այս առաքելութիւնը կատարել այժմու ծաւալով եւ տարողութեամբ, եթէ որոշ ժամանակէ մը ետք, ինքնաբոլի կերպով եւ այնուհետեւ հետեւողականօրէն, մեզի չօգնէին Արտասահմանի մեր կարգ մը ազգականներն ու ընկերները, թէթեւցնելով գոնէ մեր նիւթական բեռը:

Նաեւ այստեղ հաստատենք թէ անհնար է որ մեր այս Ճամբարը նոյն յաջողութեամբ իրագործուի, եթէ ան չկատարուէր Նարեկացի Արուեստի Միութեան Շուշիի Կեդրոնի յարկին տակ, եւ մեր եղբօր Նարեկի ու իր այս Միութեան կարգ մը նուիրեալ գործակալների աջակցութեամբ, հոգածութեամբ եւ զօրակցութեամբ, այլազան եւ հիմնական մակարդակների վրայ: Ուրեմն, հաճեցէք այս Պատուոգիրը կախել Շուշիի մեր Կեդրոնին - մեր հաւաքական տան - մէջ, ձեզի հանդէպ մեր սրտագին շնորհակալութեամբ եւ երախտագիտութեամբ:

Այժմ, մենք կը ջանանք «վերադարձնալ» այստեղ, Գանատա, թէկուզ մարմնապէս վերադարձած ենք... Այս տարի յատկապէս դժուար է այս հոգեկան գործընթացը, սակայն դիմանալու ենք, շնորհիւ - Տիրոջ Կամքով - յաջորդ իսկական Վերադարձի հեռանկարին, յանձնառութեան եւ խոստումին, իսկական, յարատեւ ու յաւերժական Վերադարձ՝ դէպի մեր աննման եւ դիւթական, մեր պաշտելի՝ Շուշին:

Խորին եւ սուր կարօտով՝

Հայդուկ, Այտա, Տեսիլ եւ Պատրոյգ Շամլեան

<http://www.shoushisummercamp.org>